ժողովի քաղաքական նշանակութիւնը շատերը Գերմանիայում հակառակ են դրան և Լայպցիգ քաղաքի նշանաւոր Թոմաս-կիրխէ կոչուած եկեղեցու հոգաբարձութիւնը մերժել է թոյլ տալու, որ այդ եկեղեցում տեղի ունենայ հանդիսաւոր ժամերգութիւն։

— Տաճկահայոց թշուառութեան կարեկցող գերմանացիք դոկտ. Լեպսիուսի շնորհիւ ըմբռնելով հայ քրիստոնեից հալածանքի նշանակութիւնը, երկու տարի է ի վեր մօտ 700,000 մարկ դրամ են ժողովել, որ կամենում են կոտորածներից ազատուածների թշուառութիւնը մեղմացնելու գործ դնել։ Այդ զուտ քրիստոնէական կուսակցութեան նպատակը չէ կրօնական քարոզչութիւն անել և թշուառ հայերի հաւատը դրամով գնել, ուստի և նրանք յատուկ պատուիրակ են ուղարկել Պարսկաստանի Տաճկաստանին սահմանակից գաւառները, խնամելու գաղթական և փախստական հայերին և մի ապաստանարան հիմնելու անտէրունչ որբերի համար։ Այդ մարդասիրական գործի գլուխ է կանգնել պաստոր Ֆիշերը, որ այս օրերս իւր երիտասարդ ամուսնու և երկու գերմանուհի ողորմած քոյրերի հետ միասին ուղևորուեցաւ Խոյի և Սալմաստի կողմերը։

Շուեդիա. — Օսկար Բ. թագաւորի յոբելեանի առթիւ այս ամսու օգոստոսի 31 մինչև սեպտ. 4 տեղի կունենայ կրօնական գիտնական մի համաժողով Ստոքհոլմում։

## ԲԱԺԻՆ ՀԵԹԱՆՈՍԱՑ.

Չինաստան. — Իռլանդացի պատէր Մակվայն, որ իւր ամբողջ կեանքը Չինաստանումն է անցկացրել և լաւ գիտէ չինարէն, կազմել է այդ լեզուի բառգիրքը և դրա համար Լեոն ԺԳ. պապի օրհնութեան արժանացել։ Այս քարոզիչն ահա ինչ է ասում Չինաստանի վերաբերութեամբ. «Թէպէտ ամեն մի բողոքական քարոզիչ տարէն 5000 ֆրանկ է ստանում, իսկ կաթոլիկ քարոզիչը 500 ֆ., այնուամենայնիւ 20,000 բողոքականի դիմաց այնտեղ 2,000,000 կաթոլիկ չինացիք կան։ Չինացիք կրօնասէր են և ամենքն էլ Աստուած են ճանաչում, նրանց մէջ անաստուածներ չկան. տիրապետող աղանդները երեք են. կոնֆուկեան, բուդդայական և թաոնական։ Կայսրը կոնֆուցկեան է, բայց խնամակալ է համարւում և միւս աղանդներին։ Ես հաւատում եմ, որ չինացիք քրիստոնէութիւն կընդունեն՝ եթէ հանգամանքները փոփոխուեն»։

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

*
* *

Ա՜խ, ես գիտեմ, թշուառ եղբայր,
Ծանր է խաչդ անկար ուսիդ.
Ճակատագրին խորև խորթ մայր
Չէ ժպտացել դեռ երեսիդ։

Գիտեմ՝ վաղուց ես դու ամփոփ
Անցնել անքուն երկար գիշեր,
Եւ արցունքով՝ գերդ սպասել,
Մէկ մէկ համրել կեանքիդ օրեր։

Բայց դու գիտե՞ս, որ դեռ անմիշտ
Չէ տեսնուած մի հողածին,
Եւ չեղածի յուսովն է միշտ
Որ տալիս ենք կեանքին մի գին.

Հաւատում եմ, թէ կը գայ օր —
Բաղդը երազ չի թուիլ մեզ,
Թէ կը բացուի ՚նա փառաւոր
Առաւօտեան վառ շողի պէս.

Թէ կը ցամքի դառն արտասուք,
Լոյս կը դառնայ այս սեւ գիշեր,
Կը փարատուին կսկիծ եւ սուգ —
Կը գայ մայիս շնորհաբեր։

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.